ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացած՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրում նախատեսվող <<Սևան ֆեստիվալ Սիթի>> հանգստի և սպասարկման գոտու կառուցման նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2025թ-ի հունիսի 27-ին, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրում նախատեսվող՝ <<Սևան Ֆեստիվալ Սիթի>> հանգստի և սպասարկման գոտու նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Առավոտ>> օրաթերթի՝ 2025թ-ի մայիսի 29-ի հերթական համարում:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝ Դարանակ բնակավայրի վարչական ղեկավար՝ Հովհաննես Կարապետյանը և բնակիչները, Վարդենիս համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար՝ Էդգար Պետրոսյանը, <<Ստարտափ Արմենիա>> գիտակրթական հիմնադրամի տնօրեն՝ Վահագն Ռափյանը և <<Նախագիծ Հենք>> ՍՊ ընկերության նախագծող - ճարտարապետ՝ Հայկ Բաբայանը:

Վարդենիս համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Էդգար Պետրոսյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև խոսքը փոխանցեց <<Ստարտափ Արմենիա>> գիտակրթական հիմնադրամի տնօրեն՝ Վահագն Ռափյանին:

<<Ստարտափ Արմենիա>> գիտակրթական հիմնադրամի տնօրեն՝ Վահագն Ռափյանը քննարկման մասնակիցներին տեղեկացրեց, որ նախատեսվող հանգստի և սպասարկման գոտին կառուցվելու է Դարանակ բնակավայրում <<Սևան ազգային պարկի>> կողմից կառուցապատման իրավունքով տրամադրված տրածքում, գործունեությունը կրելու է սեզոնային բնույթ և իր մեջ ներառելու է տարբեր ծավալների միջոցառումների անցկացում, որոնցից ամենամեծը լինելու է <<Սևան Ստարտափ Սամմիթը>>, որին վերջին տարիներին մասնակցել են շուրջ 10000 մարդ աշխարհի 40 պետություններից:

Միջոցառման տարածքները ունենալու են տարբեր ենթակառուցվածքներ, այդ տվում հրապարակ մեծ բեմով, մինչև 100 միավոր վրան պարունակող հյուրատուն, որտեղ կարող են գիշերել մինչև 5000 մասնակից, ինչպես նաև սանհանգույցներ և լոգարաններ և բազմաֆունկցիոնալ սննդի գոտի(ֆուտկորդ):

<<Ստարտափ Արմենիա>> գիտակրթական հիմնադրամի տնօրեն՝ Վահագն Ռափյանը այսքանով սահմանափակեց իր ելույթը և խոսքը փոխանցեց <<Նախագիծ Հենք>> ՍՊ ընկերության նախագծող - ճարտարապետ՝ Հայկ Բաբայանին:

Հայկ Բաբայանը ողջունեց մասնակիցներին և տեղեկացրեց, որ քննարկվող նախագիծը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն ենթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է՝ 2 հանրային լսում:

Հայկ Բաբայանը մասնակիցներին տեղեկացրեց, որ ծավալվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցությունը պայմանավորված է լինելու փոշու արտանետումներով:

Հայկ Բաբայան տեղեկացրեց նաև, որ տեղում հիմնական շինություններ չեն լինելու և փոշու արտանետումները կապված կլինեն հողային աշխատանքների և տեխնիկայի տեղաշարժի հետ և հետևաբար ազդեցությունները լինելու են տեղային, բայց անկախ ամեն ինչից տարածքում իրականացվելու է ջրցան, տարածքը ցանկապատվելու է, իսկ շինարարական հրապարակը կահավորված է լինելու համապատասխան կոմպոնենտներով:

Տարածքում անպայման լինելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անիվների լվացում:

Քննարկմանը մասնակից Դարանակ բնակավայրի բնակիչներ՝ Մարիամ Խաչատրյանը և Ռիմա Աբրահամյանը իրենց հուզող հարցը ուղղեցին <<Ստարտափ Արմենիա>> գիտակրթական հիմնադրամի տնօրեն՝ Վահագն Ռափյանին:

Հարց.

- Նախատեսվող գործունեության ընթացքում առաջացած աշխատատեղերում հնարավոր է առաջնահերթությամբ ընդգրկել տեղի բնակչությանը:

Պատասխան.

- Այս պահին էլ աշխատողների մեծամասնությունը Դարանակ և Արեգունի բնակավայրի բնակիչներ են, գոյություն ունեցող ազատ աշխատատեղերը ևս կհամալրվեն տեղի բնակչությամբ:

Քննարկմանը մասնակից բնակիչները ողջունեցին նախաձեռնությունը:

Բնակիչների կողմից առարկություններ չհնչեցին և Էդգար Պետրոսյանը ավարտեց քննարկումը:

Քննարկումների վարող և պատասխանատու՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Է. Պետրոսյան

Զեռնարկողի ներկայացուցիչ՝

<<Ստարտափ Արմենիա>> գիտակրթական հիմնադրամի տնօրեն Վ. Ռափյան

Հանրային լսում Վարդենիս քաղաքում

Նպատակ՝ Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրում 27.06. 2025 թվականի նախատեսվող <<Սևան Ֆեստիվալ սիթի>> հանգսի և սպասարկման գոտու կառուցման աշխատանքների հանրային լսումների առաջին փուլ:

Ամսաթիվ՝ 27.06.2025թ.

N	Անուն, Ազգանուն	Համայնք	Բնակավայր	Ստորագրություն
1.	[illegible]	Վարդենիս	Արեգունի	[signature]
2.	[illegible]	Վարդենիս	Արեգունի	[signature]
3.	[illegible]	Վարդենիս	Արեգունի	[signature]
4.	[illegible]	Վարդենիս	[illegible]	[signature]
5.	[illegible]	Վարդենիս	Արեգունի	[signature]
6.	[illegible]	Վարդենիս	Արեգունի	[signature]
7.	[illegible]	[illegible]	Արեգունի	[signature]
8.	[illegible]	Վարդենիս	Արեգունի	[signature]
9.	[illegible]	Վարդենիս	Արեգունի	[signature]
10.	[illegible]	Վարդենիս	Արեգունի	[signature]
11.	[illegible]	Վարդենիս	[illegible]	[signature]

12.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
13.	[illegible]	[illegible]		[illegible]
14.	[illegible]	[illegible]		[illegible]
15.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
16.	[illegible]	[illegible]		[illegible]
17.	[illegible]	[illegible]		[illegible]
18.				
19.				
20.				
21.				
22.				
23.				
24.				
25.				
26.				
27.				